ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱԳԱՐԱԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԻՍՏԻ ԿՈՂՄԻՑ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԱԳԱՐԱԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ Գ. ԱԳԱՐԱԿԱՎԱՆ

2022թ

31 օգոստոսի 2022թ

ԱԳԱՐԱԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 2022- 2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտակցելով պետության զարգացման ու հզորացման գործում կրթության դերը անրաժեշտ է ամեն ջանք ու եռանդ ներդնել բանիմաց, ուսյալ, արժանապատիվ, հայրենասեր, աշխատասեր քաղաքացիներ կրթելու ու դաստիարակելու համար: Մեր նպատակին հասնելու համար պետք է ժամանակաշրջանի պահանջներին համահունչ, առաջադրել նորանոր խնդիրներ և փորձել հասնել դրանց լուծմանը: Հետևողական աշխատանքների, քննարկումների միջոցով փորձել հասկանալ ստացված արդ-յունքների դրական ու բացասական կողմերը, նորագույն ու փորձված մեթոդներ կիրառելով՝ որակական նոր մակարդակի վրա բարձրացնել բոլոր առարկաների դասա-վանդումը դպրոցում:

Անհրաժեշտ է բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը՝ լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը:

Շարունակել աշխատանքն ուսուցիչների մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Ուսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների, բաց դասերի և այլ միջոցառումների միջոցով: Մանկավարժներիկարևորագույն խնդիրներից մեկը համարել ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասային յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը՝ ապահովելով սովորողների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների վարքին, զարգացնել գրագետ ու կապակցված խոսքը բոլոր առարկաների դասավանդման ընթացքում, հաղորդակից դարձնել գիտամշակութային նորագույն նվաճումներին:

Դպրոցի սովորողներին նախապատրաստել դպրոցականների մրջազգային առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին՝ նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման միջոցով:

Ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

ԲԱԺԻՆ I

ՄԻՋՆԱԿԱՐԳ 12ամյա ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

	Աշխատանքի բովանդակությունը	**Ժամկետը**	**Կատարող պատասխանատու**	**Նշում**
1	2022-2023 ուստարվա աշխատանքների պլանավորում և կազմակերպում	2022թ օգոստոս	Տնօրեն	
2	Ագարակավան գյուղում անցկացնել աշա-կերտների հաշվառում	2022թ օգոստոս, սեպտեմբեր	Տնօրեն	
3	Առաջին դասարանի աշակերտների նախակրթարանի սաների ընդունելությունը կատարել ծննդյան փաստաթղթերի, օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա և թույլ չտալ սահմանված կարգի խախտում:	2022թ օգոստոս, սեպտեմբեր	Տնօրեն	
4	Նախապատրաստել դպրոցը ուսումնական տարվա մեկնարկին՝ ապահովելով սանիտարահիգենիկ պատշաճ պայմաններ	Մինչև սեպ-տեմբերի 1-ը	Տնօրեն	
5	Հաստատել ուսպլանը (մանկխորհրդի որոշման հիման վրա) Կազմել և կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնել • Տարիֆիկացիոն ցուցակը • Հաստիքացուցակը • Նախահաշիվը	30.09. 2022թ 10.09.2022թ	Տնօրեն Տնօրեն, հաշվապահ	
6	Հաստատել ուստարվա համար • Մանկխորհրդի կազմը • Հերթապահության կարգը • I կիսամյակի դասացուցակը • Դասղեկների տարեկան աշխա-տանքային պլանը • Գրադարանավարի տարեկան աշխատանքային պլանը:	Մինչև 15.09.2022թ 15.09.2022թ		

7	Իրականացնել վերահսկողություն • Պլանավորած աշխատանքների կատարման • Հաճախումների, դրանց հաշվառման • Մատենավարության	Ամիսը մեկ անգամ		
8	Մանկավարժական խորհրդի հերթական և արտահերթ նիստերի կազմակերպում և անցկացում	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
9	Ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների ուսումնասիրում և քննարկում	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուսուցիչներ	
10	Կազմել հաշվետվություններ նախորդ ուստարվա ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ներկայացնել կառավարման խորհրդին	Ուստարվա ընթացքում Եռամսյակը մեկ անգամ	Տնօրեն, հաշվապահ	
11	Առարկայական թեմատիկ պլանների քննարկում, հաստատում:	Օգոստոս, սեպտեմբեր	Տնօրեն, ուսուցիչներ	
12	Կատարել ներքին գնահատում նախորդ ուստարվա ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունների հիման վրա	Օգոստոս	Տնօրեն	
13	Կատարել լիազոր մարմնի կողմից օրենքով նախատեսված կարգով արվող հրահանգները	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, հաշվապահ, այլք՝ ըստ ոլորտների	
14	Ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանի քննարկում և հաստատում	Օգոստոս	Մանկխորհ	
15	Մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը ավարտել դասագրքերի բաշխումը պակասը լրացնել նոր դասագրքերով	Օգոստոս	Տնօրեն, գրադարանավար	
16	Ծնողական, աշակերտական և մանկավարժական խորհուրդների միջոցով ստեղծել պարտուսի ֆոնդ և օգնել կարիքավոր աշակերտներին	Ուստարվա ընթացքում	Խորհրդակցական մարմինների ղեկավարներ	
17	Ուսումնական ծրագրերի կատարման ստուգում	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
18	Ուսումնական օլիմպիադաների կազմակերպում	I կիսամյակի ընթացքում	Տնօրեն, ուսուցիչներ	
19	Մրցութային միջոցառումների կազմակերպում	Ուստարվա ընթացքում	Ուսուցիչներ	

ԲԱԺԻՆ II

ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ, ՆՐԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1	Ծանոթացնել ուսուցիչներին որակավորման տարակարգի բնութագրիչներին և դրանց շնորհման չափանիշներին՝ մղելով նրանց տարակարգ ստանալուն	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
2	Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում, ընդհանրացում և ներդրում պրակտիկ աշխատանքում	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուսուցիչներ	
3	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժական նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, ընթերցումներ, կազմակերպել փոխադարձ դասալսումներ, ինչպես դպրոցում, այնպես էլ այլ դպրոցներում	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
4	Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդատվություններ	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուսուցիչներ	
5	Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և ներդրման նպատակով փոխադարձ դասալսումներ կազմակերպել	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուսուցիչներ	
6	Ուսուցիչներին նախապատրաստել հերթական ատեստավորման	Մայիս, հունիս ամիսներին	Տնօրեն	
7	Դասավանդման մեթոդների կատարելագործման, համագործակցային ուսուցման և նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակով կազմակերպել բաց դասեր	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուսուցիչներ	
8	www. armedu, www.aniedu կայքերից մասնագիտական ամսագրերի, թերթերի նյութերի և նորությունների ուսումնասիրում և քննարկում	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուսուցիչներ	

ԲԱԺԻՆ III

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1	Սկսնակ ուսուցիչներին օգնել մշակել առարկայական ծրագրեր և օգնել դասավանդումը ճիշտ կազմակերպելուն	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, փորձառու ուսուցիչներ	
2	Հրամանագրել դասղեկ և դասվար ուսուցիչներին, պահանջել նրանցից մինչև սեպտեմբերի 30-ը կազմել ուսումնադաստիարակչական աշխատանքների պլաններ և ներկայացնել հաստատման	Սեպտեմբեր	Տնօրեն	
3	Աշխատանքային պլաններում մեծ տեղ հատկացնել առաջավոր փորձի փոխանակմանը	Օգոստոս, սեպտեմբեր	Ուսուցիչներ	
4	Մանկխորհրդի միջոցով դնել առանձին առարկաների դրվածքի ուսումնասիրումը և արդյունքներն ամփոփել առանձին նիստում	Ուստարվա ընթացքում	Մանկխորհրդի նախագահ	
5	Հրամանագրել առաջին դասարանի աշակերտներին և կատարել բոլոր գրառումները աշակերտների շարժի մատյանում	29.08.2022թ	Տնօրեն	
6	Մեծ հոգածությամբ նախապատրաստել և անցկացնել ազգային տոներն ու արժանահիշատակ տարելիցները	Ուստարվա ընթացքում	Ուսուցիչներ	
7	Կատարել հասարակական աշխատանքների բաժանում կոլեկտիվի անդամների միջև և պահանջել նրանցից կազմել աշխատանքների պլաններ	Սեպտեմբեր ամսվա ընթացքում	Տնօրեն	
8	Հրավիրել դպրոցում գործող խորհուրդների նիստեր՝ քննության առնել դպրոցին վերաբերող հարցեր	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
9	Ուսումնադաստիարակչական աշխատանքները օրինակելի ձևով կատարողների նկատմամբ կիրառել խրախուսանքի միջոցներ, իսկ թերացումների նկատմամբ՝ պատժի միջոցներ	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	

ԲԱԺԻՆ IV

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1	Ուսուցիչների ինքնակրթության գործը հաջող կազմակերպելու նպատակով օգնել նրանց մեթոդական գրականությունը և հայտնի մանկավարժների փորձը մշակել և կիրառել ուսման պրոցեսում, կամ հիմնվելով դրա վրա ստեղծել մեր դպրոցի սեփական	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուսուցիչներ	

	արդյունավետ մեթոդներ			
2	Ինքնակրթության պլաններում տեղ հատկացնել առարկայական գիտելիքների հարստացման, գեղագիտական, էկոլոգիական, բարոյական, սեռական, ֆիզիկական դաստիարակության հարցերին	Սեպտեմբեր	Ուսուցիչներ	
3	Տարվա ընթացքում կազմակերպել մեթոդական, առարկայական բնույթի զեկուցումներ, կազմակերպել բաց դասեր	Ուստարվա ընթացքում	Ուսուցիչներ	
4	Մանկխորհի նիստերում հաճախակի քննության առնել դպրոցի ուսումնադաստիարակչական հարցեր, մշակել միջոցառումներ՝ ուսման որակի բարձրացման համար	Ուստարվա ընթացքում	Ուսուցիչներ	
5	Ճիշտ պլանավորել գրադարանի աշխատանքները, աշակերտությանը և ուսուցիչներին մասնակից դարձնել մանկական գեղարվեստական գրականության ուսումնասիրմանը և հաճախակի կազմակերպել կարդացած գրքերի քննարկումներ	Ուստարվա ընթացքում	Գրադարանավար, ուսուցիչներ	
6	Աշակերտների մեջ գրականության նկատմամբ սեր առաջացնելու նպատակով խրախուսել այն աշակերտներին, ովքեր տարվա ընթացքում շատ գրքեր են կարդացել	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
7	Աշակերտությանը բացատրել գրքի դերի, նշանակության և այն խնամքով պահելու կարևորության մասին	Ուստարվա ընթացքում	Գրադարանավար, ուսուցիչներ	
8	Աշակերտների կողմից ծրագրային նյութի յուրացման աստիճանը պարզելու նպատակով տալ գրավոր աշխատանքներ և արդյունքները քննարկել մանկխորհի նիստում	Կիսամյակների ընթացքում	Տնօրեն, դասղեկներ	
9	Տարվա ընթացքում հետևողականորեն վերահսկել դասղեկների աշխատանքները, կատարել լսումներ և նրանցից լավագույնի օրինակը տարածել դպրոցում: Եթե կլինեն նորարարություններ՝ տպագրել մանկավարժական ամսագրերում	Տարվա ընթացքում	Տնօրեն	
10	Դպրոցում ստեղծել մանկավարժական անկյուն, ուր կտեղադրվեն մանկավարժական և մեթոդական թարմ գրականություն և խորհուրդ տալ ուսուցիչներին այն մշակել	Սեպտեմբեր	Տնօրեն	
11	Պահանջել դասավանդող ուսուցիչներից լրջորեն նախապատրաստվել հա-	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	

	ջորդ օրվա դասերին, դասարան մտնելուց առաջ ունենան դասի պլանը, դասապրոցեսում օգտագործել թեմային վերաբերվող տեխնիկական միջոցներ, դիդակտիկ նյութեր, ստեղծել միջառարկայական կապեր, օգտվել օժանդակ նյութերից			
12	Գրավոր աշխատանքների վիճակը պարզելու նպատակով տարվա ընթացքում տալ գրավոր աշխատանքներ հ. լեզվից, ռ. լեզվից, մաթեմատիկայից և այլն: Ինչպես նաև անցկացնել ներքին գնահատման գրավոր աշխատանքներ	Կիսամյակների ավարտին	Տնօրեն	
13	Ուսումնական առաջադիմությունը բարձրացնելու նպատակով տալ գրավոր աշխատանքներ նաև մյուս առարկաներից և արդյունքներն ամփոփել մանկխորհրդի նիստում: Նաև հանձնարարել ուսուցիչներին մրցակցային վարժությունների, խաղերի միջոցով նույնպես խթանել դասի յուրացման արդյունավետությունը	Տարվա ընթացքում	Տնօրեն, ուսուցիչներ	
14	2022-2023 ուստարվա ընթացքում ստուգման ենթարկել դասավանդման վիճակն առանձին առարկաների գծով և արդյունքները ամփոփել		Տնօրեն, դասղեկներ	
15	Պահանջել ուսուցիչներից լավ ուսումնասիրել գնահատման նոր համակարգը և ճիշտ կողմնորոշվել, թե գրավոր աշխատանքների և թե բանավոր հարցումների գնահատման գործում	Սեպտեմբեր	Ուսուցիչներ	
16	Սկսնակ ուսուցիչներին օգնել նպատակային կերպով կիրառել փորձված ուսուցիչների մեթոդներն ու փորձերը	Ուստարվա ընթացքում	Ուսուցիչներ	
17	Տարածել ետ մնացող աշակերտների հետ տարվող լավագույն աշխատանքների փորձը	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	

ԲԱԺԻՆ V

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

1	Հանրակրթական դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնեն սովորողի ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականություններում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ	Ուստարվա ընթացքում	Ծնողական խորհրդի նախագահ	
2	Մասնակցել հանրակրթական դպրոցի վճարովի ծառայությունների կազմակերպման, պայմանագրի կնքման և արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին	Ուստարվա ընթացքում	Ծնողական խորհրդի նախագահ	
3	Աջակցել հանրակրթական դպրոցի դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակությանը, ուսման որակի բարելավմանը և սոցիալական աջակցության կազմակերպմանը	Ուստարվա ընթացքում	Ծնողներ	
4	Ապահովել երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում	Ուստարվա ընթացքում	Ծնողական խորհուրդ	
5	Մասնակցել կազմակերպվող սեմինարներին, խորհրդատվություններին	Ուստարվա ընթացքում	Ծնողներ	
6	Պարբերաբար ծանոթացնել իրենց իրավունքներին, պարտականություններին, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության մասին	Ուստարվա ընթացքում	Ծնողական խորհուրդ	
7	Մասնակցել ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաների նյութական օգնություն ցույց տալու գործին	Ուստարվա ընթացքում	Ծնողներ	
8	Մշակել և ձևավորել միասնական պահանջներ, քննարկել մանկխորհի նիստերին	Ուստարվա ընթացքում	Ծնողական խորհուրդ	

Կ.Մինասյան	«Աշուն»	Հոկտեմբեր
Հ.Սահակյան	Միջոցառում նվիրված ուսուցչներին	Հոկտեմբեր
Մ.Մուրադյան	Մաքուր պահենք բնությունը թեմայով միջոցառում	Նոյեմբեր
Զինղեկ	«Բնական աղետների պատմությունից»	Դեկտեմբեր
Հ. Մկրտչյան	«Առողջ սերունդ, առողջ ապրելակերպ»	Մարտ
Ս.Մովսիսյան	«Տյառնընդառաջ»	Փետրվար
Ծ.Մովսիսյան	Անդրանիկ Օզանյանիհերոսական ուղին	Փետրվար
Զինղեկ	«Հայոց բանակը 31 տարեկան է»	Հունվար
Ժ.Անտոնյան	«Ապրիլյան քառօրյա պատերազմ»	Ապրիլ
Ս.Մովսիսյան	Ս. Զատիկ	Ապրիլ
Ս.Հասմիկ	Իմ համայնքը	Փետրվար
Հ.Մկրտչյան	«Առաջին բուժօգնություն»	Մարտ
Պ.Պողոսյան	«Մեծ լռություն» Կոմիտաս	Ապրիլ
Ա.Հակոբյան Ա.Պողոսյան	«Հայրենական մեծ պատերազմը»	Մայիս
Ս.Կիրակոսյան	«Ազնվություն»	Մայիս

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Դասղեկներ	«Անկախ Հայաստան»	20.09.2022թ
Դասղեկներ	«Ուսուցչի տոն»	Հոկտեմբեր
Դասղեկներ	«Ոսկե աշուն»	Նոյեմբեր
Դասղեկներ	«Ամանորյա հրաշք»	Դեկտեմբեր
Դասղեկներ	«Հայ զինվոր»	Հունվար
Ժ.Անտոնյան Հ.Սահակյան	«Մեղրաածոր հայոց լեզու» Անմահ Թումանյան	Փետրվար
Դասղեկներ	«Գարնան շունչը»	Մարտ
Դասղեկներ	«Ծաղկազարդ»	Մարտ
Դասղեկներ	«ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆ»	Ապրիլ
Ա.Բաղդասարյան	«Թվերի աշխարհում»	Ապրիլ
Լ.Բաղալյան	Հրաժեշտ «Այբբենարանին»	Մայիս
Ս.Կիրակոսյան	«Праздник Букваря»	Մայիս

2022-2023 ուսումնական տարի

ԱԳՔԱՐԱԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Զեկուցող	Նախնական պլանավորում	Փաստացի կատարում
1.	Լ.Բաղալյան I		
2.	Լ.Մարգարյան II		
3.	Կ.Մինասյան III		
4.	Մ.Մուրադյան IV		
5.	Հ.Սահակյան V		
6.	Հ.Մկրտչյան VI		
7.	Ժ.Անտոնյան VII		
8.	Ս.Կիրակոսյան VIII		
9.	Պ.Պողոսյան IX		
10.	Կ.Դավթյան X		
11.	Ա.Բաղդասարյան XI		
12.	Ս.Մովսիսյան XII		

Առաջարկություններ և ցանկություններ

_____

_____

_____

_____